

**Հաստատագրված վճարի և պարզեցված հարկի տեսակարար կշիռը
ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում և ՀՆԱ-ում¹**

№	Ցուցանիշները	Չափի միավոր	Տարիներ					
			2005	2006	2007	2008	2009	2010
1	Պ/բ հարկային եկամուտներ	մլրդ դրամ	304.1	366.3	483.4	598.3	503.8	574.1
2	ՀՆԱ	մլրդ դրամ	2242.9	2656.2	3148.7	3646.1	3102.1	3509.6
3	Հաստատագրված վճար	մլրդ դրամ	12.9	15.2	17.4	20.2	22.2	22.0
	Պարզեցված հարկ	մլրդ դրամ	6.3	7.5	10.7	6.1	0.3	0.0
4	Հաստատագրված վճարի մասնաբաժինը հարկային եկամուտներում	%	4.2	4.1	3.5	3.3	4.4	3.8
5	Պարզեցված հարկի մասնաբաժինը հարկային եկամուտներում	%	2.1	2.0	2.2	1.0	0.1	0.0
6	Հաստատագրված վճարի մասնաբաժինը ՀՆԱ-ում	%	0.6	0.6	0.6	0.6	0.7	0.7
7	Պարզեցված հարկի մասնաբաժինը ՀՆԱ-ում	%	0.3	0.3	0.3	0.2	0.0	0.0

Վերը թվարկված գործունեություններն ունեն սովորականից բարձր շահութաբերության մակարդակ, և այս ոլորտներից հաստատագրված վճարներ/ՀՆԱ այսպիսի ցածր ցուցանիշը պայմանավորված է հիմնականում հաստատագրված վճարների մասին օրենքում օրենսդրական բացթողումներով և տվյալ ոլորտում առկա մեծ սովերայնությամբ:

ԱՐՄԵՆ ՍԻՔԱՅԵԼՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԼՂՀ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կարելի է արձանագրել, որ ԼՂՀ վարկային համակարգի ակունքներում կանգնած է ԽՍՀՄ բանկային համակարգի ժառանգությունը: ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը պետության սեփականությունն էին և գտնվում էին պետական մարմիններից լիովին կախվածության մեջ²: Կապված տնտեսական համակարգի առանձնահատկությունների հետ՝ ԽՍՀՄ Պետական բանկն առանձնապես ջանքեր չէր գործադրում միջոցների ներգրավման և բաշխման համար: Բանկ այն է, որ պետական կազմակերպությունները պարտավոր էին իրենց ազատ դրամական միջոցները պահել Պետական բանկում, ինչը նշանակում էր, որ այդ միջոցները փաստացի կերպով «ծուլվում» էին Պետական բանկի այլ ռեսուրսների հետ: Ձեռնարկությունները նույնպես առանձնապես մտահոգված չէին ռեսուրսների ներգրավման հարցով, քանզի համընդհանուր պլանավորման պայմաններում պետական գանձարանից ստանում էին այնքան դրամական միջոցներ, որքան որոշված էր նախօրոք: Նման պայմաններում ձեռնարկությունների ջանքերն ուղղվում էին ոչ թե ռեսուրսների ներգրավման այլընտրանքների միջև ընտրության կատարմանը, այլ պլանների ուղղացմանը, դրանց հաստատմանն ուղղված ոչ պաշտոնական անձնական կապերի օգտագործմանը, իսկ պլանային փաստաթղթերի հաստատումից հետո արդեն կարելի էր չանհանգստանալ ռեսուրսների ստացման համար: Ահա նման պայմաններում արդեն խորհրդային վերջին տարիներին ԽՍՀՄ ֆինանսական ոլորտում հասունացել էր բավականին լուրջ ֆինանսական ճգնաժամ, որն արտահայտվում էր այնպիսի երևույթների տեսքով, ինչպիսիք են բոլոր մակարդակներում պետության առջև ֆինանսական

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2010թ., էջ 377-382:

² Рясенцева В.А., “Советское гражданское право”. т.1 М., 1987.

պլանների ու պարտավորությունների կատարման թերացումը, ֆինանսական կարգապահության վատթարացումը, շահույթի և ինքնարժեքի նվազեցման պլանը չկատարող կազմակերպությունների թվի աճը, վնասաբերության աճը, ինչպես նաև անհիմն դոտացիաների թվի ավելացումը և այլն:

Բացի հետխորհրդային բոլոր պետություններին բնորոշ վերը նշված դժվարություններից՝ ԼՂՀ բանկային համակարգի ձևավորման սկզբնական փուլը համընկավ աշխարհաքաղաքական շատ ծանր վերափոխումների հետ: Խոսքը 1988թ. փետրվարին սկիզբ առած Ղարաբաղյան շարժման մասին է, որը նպատակ ուներ գործող ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների շրջանակներում հասնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Հայկական ԽՍՀ վերամիավորմանը: Հետագա տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ն բացառապես խաղաղ հիմք ունեցող և միանգամայն օրինական այս շարժումը փորձեց ճնշել հանցավոր ագրեսիայի միջոցով, ինչը սկիզբ դրեց Արցախյան ազատամարտին:

Այնուամենայնիվ, թե՛ Ղարաբաղում և թե՛ Հայաստանում նոր բանկային մեխանիզմի կառուցումը տրվում էր շատ դժվար: Օրենսդրության բացակայության պայմաններում անկախության սկզբնական տարիներին դեռևս պահպանվում էր նախկին խորհրդային ռուբլու միասնական գոտին, շարունակվում էին կիրառվել բանկային գործունեության իրավական կարգավորման նախկին օրենսդրական և ենթօրենսդրական նորմերը: Բանկային համակարգի ձևավորման թերևս կարևորագույն իրադարձությունը 1993թ. նոյեմբերի 22-26-ին հայկական դրամի շրջանառություն մտցնելն էր: Ազգային արժույթի շրջանառության մեջ դնելը կարևորագույն նշանակություն ունեցավ ինքնուրույն տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման առումով, այն նոր հնարավորություններ ստեղծեց տնտեսական բարեփոխումների ընթացքի արագացման, ֆինանսական, հատկապես՝ բանկային հատվածի վերակառուցման համար¹:

Բանկային համակարգի ձևավորումը և զարգացումը Ղարաբաղում և Հայաստանում պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Ստորև ներկայացված են պայմանականորեն առանձնացված ժամանակագրական փուլերն ու դրանց առանձնահատկությունները:

Առաջին փուլ՝ 1988-1994 թթ.: Փուլն ընդգրկում է Խորհրդային Միության փլուզմանը նախորդած ժամանակաշրջանը և հետխորհրդային շրջանի առաջին տարիները: Այս փուլի հիմնական առանձնահատկությունը պայմանավորված էր Ղարաբաղյան շարժման և Արցախյան ազատամարտի ամենակտիվ ժամանակաշրջանի առանձնահատկություններով: Նախ՝ ԼՂՀ առջև առկա լիարժեք էին օրհասական խնդիրներ, և բանկային համակարգի ձևավորումը չէր դիտարկվում որպես կարևորագույն լուծման կարիք ունեցող խնդիր: Ավելին, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ այս փուլում գոյություն չուներին ձևավորված վերջնական տեսակետներ և պատկերացումներ ԼՂՀ տնտեսական և բանկային համակարգերի կառուցվածքի, ՀՀ տնտեսության հետ փոխառնչությունների վերաբերյալ:

Երկրորդ փուլ՝ 1995-1996թթ.: Բանկային համակարգի ձևավորման երկրորդ փուլը բնութագրվում է բանկային օրենսդրության ակտիվ մշակմամբ: Բանկային համակարգի բարեփոխումների այս փուլի առանձնահատկությունն այն է, որ բանկային միավորների վիճակի կտրուկ վատթարացման հետ զուգընթաց, գործունեության մեջ դրվեցին նոր օրենքներ:

Երրորդ փուլ՝ 1997-2000թթ.: Բանկային համակարգի բարեփոխումների 3-րդ փուլի առանձնահատկությունն այն է, որ տնտեսության կայունացման հետ մեկտեղ դրական փոփոխություններ տեղի ունեցան բանկերի և տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների բնագավառում, բարելավվեցին բանկային համակարգի գործունեությունը բնութագրող ցուցանիշները: Այս փուլում շարունակվեց բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը, որը լուրջ ներդրում հանդիսացավ համակարգի բնականոն գործունեության ապահովման գործում:

Չորրորդ փուլ՝ 2001թ.-ից մինչ օրս: Այս փուլում բանկային համակարգը թևակոխեց իր զարգացման ժամանակակից փուլը: Այս ժամանակաշրջանը նշանավորվեց բանկային օրենսդրության մեջ կատարված մի շարք էական փոփոխություններով և նորամուծություններով: Ընդունվեցին նոր նորմատիվ ակտեր, փոփոխություններ կատարվեցին բանկերի գործունեությունը կարգավորող կանոնակարգերում, օրենքներում՝ կարգավորման դաշտի կատարելագործման, Բազելյան սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով:


Քննարկման առանձնահատուկ թեմա է ԼՂՀ բանկային համակարգի կարգավիճակն ու կառուցվածքը: ԼՂՀ բանկային համակարգի զարգացումների արդյունքում սահմանվեց, որ ԼՂՀ և

¹ Սինաթյան Է., ՀՀ ֆինանսավարկային համակարգի վերափոխումների ժամանակագրությունը 1990-ական թվականներին: Рынок капитала в Армении №21,22 (127,128), ноябрь 2003:

ՀՀ բանկային համակարգերը գործելու են մեկ հարթությունում, ինչը պատմական այդ փուլում հիմնավորված որոշում էր: Այդպիսով, ԼՂՀ ժամանակակից բանկային համակարգը ՀՀ բանկային համակարգի բաղկացուցիչ մասն է: Բանկային ոլորտը ԼՂՀ այն եզակի բնագավառն է, որտեղ գործում են ՀՀ բանկային համակարգին առնչվող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: ԼՂՀ բանկային համակարգն ունի երկմակարդակ կառուցվածք, որի առաջին մակարդակը զբաղեցնում է ՀՀ Կենտրոնական բանկը: Այն կարգավորում և վերահսկում է ԼՂՀ տարածքում գործող բանկային միավորների գործունեությունը, ԼՂՀ և ՀՀ տարածքներում իրականացնում է միասնական դրամավարկային քաղաքականություն: ԼՂՀ բանկային համակարգի երկրորդ մակարդակը ներկայացված է մեկ առևտրային բանկով («Արցախբանկ» ՓԲԸ) և ՀՀ բանկերի՝ ԼՂՀ տարածքում գործող մասնաճյուղերով: ԼՂՀ և ՀՀ բանկային համակարգերի սխեմատիկ գծապատկերը ներկայացված է գծանկարում:

Գծանկար 1

ԼՂՀ և ՀՀ բանկային համակարգերը



Այսպիսով՝ պատմական զարգացումների արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձևավորվեց թերևս աշխարհում եզակի բանկային համակարգ: Այստեղ դե յուրե գործում է ՀՀ բանկային համակարգը, սակայն դե ֆակտո այն բավականին ինքնուրույն համակարգ է՝ իր խաղի կանոններով և առանձնահատկություններով: Չնայած ՀՀ բանկային համակարգի մաս կազմելուն՝ ՀՀ բանկերն առանձնապես շահագրգռված չեն այստեղ գործունեություն ծավալելու մեջ, ինչն արտահայտվում է նրանում, որ ոչ բոլոր ՀՀ բանկերը ԼՂՀ տարածքում ունեն գործող մասնաճյուղեր:

Ներկայումս, ԼՂՀ-ում ներդրված է բանկային ծառայությունների, այդ թվում՝ նաև վարկավորման բավականին լայն համակարգ: 2009-2011թթ. ԼՂՀ բանկային համակարգի կողմից սպասարկվող վարկերի ծավալում լուրջ աճի միտում է արձանագրվել^{1,2}: 2009թ. 17.8 մլրդ դրամ վարկային փաթեթը աճել է՝ 2010թ. հասնելով 29.2 մլրդ, 2011թ.՝ 42.5 մլրդ դրամի, այսինքն՝ աճել է ավելի քան 24.7 մլրդ դրամով կամ ավելի քան 2.35 անգամ: Աճի ապահովման գործում մեծ է եղել կազմակերպություններին և տնային տնտեսություններին տրամադրված վարկերի դերը (աղյուսակ 1):

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, 2010 թվականին: ԼՂՀ ԱԿԾ, Ստեփանակերտ, 2011, էջ 64-70:

² Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, 2009 թվականին: ԼՂՀ ԱԿԾ, Ստեփանակերտ, 2010, էջ 65-70:

Աղյուսակ 1

ԼՂՀ բանկային հատվածի վարկերը ըստ տնտեսության հատվածների, տարեսկզբին

	Մլն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Ոչ ռեզիդենտներին	167.9	82.0	-	0.9	0.3	-
Կազմակերպություններին	10019.7	18228.1	24051.4	56.3	62.3	56.6
Տնային տնտեսություններին	7609.1	10183.2	14084.2	42.7	34.8	33.1
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	-	-	1817.2	-	-	4.3
Այլ ֆինանսական կազմակերպություններին	16.1	755.8	2573.3	0.1	2.6	6.0
Ընդամենը	17812.8	29249.1	42526.1	100.0	100.0	100.0

Բանկային համակարգի տրամադրած վարկային միջոցների ճյուղային բաշխման ուսումնասիրությունը մույնպես հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում: Այսպես, բոլոր ճյուղերին տրամադրված վարկային միջոցների արժեքային ծավալի աճին զուգահեռ բավականին մեծ փոփոխություններ են արձանագրվել վարկերի ճյուղային կառուցվածքում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ԼՂՀ բանկային հատվածի վարկերի ճյուղային կառուցվածքը, տարեսկզբին

	Մլն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	3333.3	5692.2	6201.5	18.7	19.5	14.6
Գյուղատնտեսություն	1043.8	1798.6	3346.4	5.9	6.1	7.9
Շինարարություն	1472.6	4435.2	6074.8	8.3	15.2	14.3
Առևտուր	4204.6	4480.0	5108.1	23.6	15.3	12.0
Այլ ճյուղեր	7758.5	12843.2	21795.3	43.5	43.9	51.2
Ընդամենը	17812.8	29249.2	42526.1	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ նվազել են արդյունաբերության և առևտրի ոլորտին տրամադրված վարկերի մասնաբաժինները, փոխարենը ավելացել է գյուղատնտեսության, շինարարության և այլ ճյուղերի վարկավորման մասնաբաժինը:

ԼՂՀ ֆինանսական համակարգում որոշակի տեղ ունեն նաև ոչ բանկային ֆինանսական հաստատությունները, որոնց մասնաբաժինը ընդհանուր փոխառությունների ծավալում 2011թ. սկզբի դրությամբ կազմել է 8%-ից մի փոքր ավել: Ի տարբերություն բանկային համակարգի՝ ոչ բանկային կազմակերպությունների տրամադրած վարկային ռեսուրսները 2011թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել են՝ 5.1 մլրդ դրամից հասնելով 3.5 մլրդ դրամի: Ընդ որում, մինչ այդ նվազումը (2010թ.) ոչ բանկային ֆինանսական հաստատությունների մասնաբաժինը փոխառությունների շուկայում կազմում էր ավելի քան 17% (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ԼՂՀ ոչ բանկային կազմակերպությունների փոխառությունները ըստ տնտեսության հատվածների, տարեսկզբին

	Մլն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Ոչ ռեզիդենտներին	-	-	-	-	-	-
Կազմակերպություններին	2502.6	3246.4	786.9	53.0	63.8	22.6
Տնային տնտեսություններին	1744.6	1715.8	2581.8	36.9	33.7	74.1
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	477.3	-	115.0	10.1	-	3.3
Այլ ֆինանսական կազմակերպություններին	-	128.0	-	-	2.5	-
Ընդամենը	4724.5	5090.2	3483.7	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հատկապես նվազել են կազմա-

կերպարվածներին տրամադրվող վարկերը:

Ամենայն հավանականությամբ դա կապված է ֆինանսատնտեսական ճգնաժամի և բանկային համակարգի խիստ մրցակցային պայմանների հետ: Ոչ բանկային համակարգի տրամադրված վարկային միջոցների ճյուղային բաշխման ուսումնասիրությունը նույնպես հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ԼՂՀ ոչ բանկային կազմակերպությունների կողմից իրականացված փոխառությունները ըստ տնտեսության ճյուղերի, տարեսկզբին

	Մլն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	740.7	699.3	78.1	15.7	13.8	2.2
Գյուղատնտեսություն	1731.8	1465.1	2047.5	36.6	28.8	58.8
Շինարարություն	367.9	570.8	160.6	7.8	11.2	4.6
Առևտուր	363.6	912.9	539.9	7.7	17.9	15.5
Այլ ճյուղեր	1520.5	1442.1	657.6	32.2	28.3	18.9
Ընդամենը	4724.5	5090.2	3483.7	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ոչ բանկային հատվածը կորցնում է արդյունաբերության վարկավորման իր ունակությունը՝ ամբողջության զիջելով այն բանկային համակարգին: Փոխարենը ավելանում է գյուղատնտեսության վարկավորման պոտենցիալը, որտեղ կենտրոնացած է ոչ բանկային համակարգի տրամադրված վարկային միջոցների շուրջ 60%-ը: Նման պատկերը կարելի է բացատրել գյուղատնտեսության ռիսկայնությամբ և բանկային համակարգի՝ գյուղատնտեսության վարկավորումից խուսափելու գործոններով:

Մասնագիտական տեսանկյունից բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ բանկային համակարգի տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքի համեմատումը ԼՂՀ համապատասխան ցուցանիշների հետ: ՀՀ բանկային համակարգի տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 5-ում¹:

Աղյուսակ 5

ՀՀ բանկային հատվածի վարկերի ճյուղային կառուցվածքը, տարեսկզբին

	Մասնաբաժինը, %		
	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	13.9	21	23
Գյուղատնտեսություն	5.9	6.3	5.9
Շինարարություն	6.4	7.7	8.4
Առևտուր	21.4	20.8	20.9
Այլ	52.4	44.1	41.8
Ընդամենը	100	100	100

Աղյուսակ 2-ի և աղյուսակ 5-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ և ԼՂՀ տնտեսությունները որոշակի կառուցվածքային տարբերություններ ունեն: Եթե ՀՀ արդյունաբերության ոլորտում 2011թ. տարեսկզբին տեղաբաշխված է եղել վարկերի 22.8%-ը, ապա ԼՂՀ-ում՝ 14.6%-ը, ընդ որում, եթե Հայաստանում նկատվում է այս ոլորտում տեղաբաշխված ռեսուրսների մասնաբաժնի աճ, ապա ԼՂՀ-ում՝ նվազում: Նմանատիպ միտում է արտահայտվում նաև առևտրի ոլորտում, որտեղ ՀՀ-ի համեմատաբար կայուն մասնաբաժնին զուգահեռ ԼՂՀ-ում արձանագրվել է նվազում: Շինարարության դեպքում թե՛ Հայաստանում և թե՛ ԼՂՀ-ում նկատվում է աճ, սակայն, ԼՂՀ-ում՝ ավելի արտահայտված: Հակառակ միտումն է դիտվում գյուղատնտեսության և մյուս ճյուղերում:

Համեմատությունը ցույց է տալիս նաև, որ Հայաստանի պարագայում առևտրի ոլորտը վարկերի զգալիորեն ավելի մեծ մասնաբաժին է կլանում, ինչը հավանաբար կապված է այն համաճանաչի հետ, որ արտաքին առևտրում, հիմնականում, մասնագիտացված են հայաստանյան ընկերությունները, իսկ ԼՂՀ առևտրային կազմակերպությունները օգտվում են իրենց հայաստանյան

¹ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների: <http://www.cba.am>

գործընկերների ծառայություններից:

Նշենք ևս մեկ կարևոր համագամանք: ԼՂՀ վարկային համակարգի վիճակագրության վերլուծությունն ու հետևություններ անելը բավականին ռիսկային են այն իմաստով, որ կապված տնտեսության ոչ մեծ լինելու հետ՝ տարեկան տատանումների ամպլիտուդն այստեղ բավականին մեծ է: Այնուամենայնիվ՝ կարող ենք արձանագրել, որ բնականոն զարգացող տնտեսությունը չի կարող գոյություն ունենալ առանց կայուն և ուժեղ բանկային համակարգի: Ժամանակակից աշխարհում բանկերի նշանակությունը դուրս է եկել դրամային ու վարկային հարաբերությունների շրջանակից: Առանց դրանց հնարավոր չէ պատկերացնել տնտեսվարող սուբյեկտների գործունեության նորմալ, ռացիոնալ կազմակերպումը տնտեսական զարգացման գրեթե բոլոր մակարդակներում: Մինչդեռ թույլ բանկերը պետության թուլացման ու տնտեսության դեգրադացման գործոն են¹:

ԼՂՀ ներկայիս խնդիրները հիմնականում կապված են ճգնաժամային երևույթների հաղթահարման հետ: Արդյունավետ գործող այնպիսի բանկային համակարգի առկայությունը, որն ի վիճակի կլինի ապահովել ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը և դրանց ուղղորդումը դեպի տնտեսության զարգացման առաջնային ուղղություններ, իսկապես կարևոր նշանակություն կունենա: Սակայն, հարկ է նշել, որ ներկայումս տնտեսության իրական հատվածի վարկավորումը կապված է վարկառուների անվճարունակության բարձր ռիսկի հետ: Դրա հետևանքով բանկերը խուսափում են ավելորդ ռիսկերից ու նախընտրում են վարկեր տրամադրել միայն բարձր հուսալիություն ունեցող գրավի առկայության դեպքում, ինչը զգալիորեն կրճատում է վարկառուների շրջանակը:

ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՎԱՐԿԻ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարչահրամայական համակարգից շուկայական տնտեսության անցումն իրատեսական չէ առանց վարկային համակարգի զարգացման, որը պետք է հիմնված լինի շուկայական տնտեսության գործունեության սկզբունքների վրա: Վարկային համակարգը վարկային հարաբերությունների, վարկավորման ձևերի ու եղանակների, ինչպես նաև ֆինանսավարկային հաստատությունների ամբողջությունն է, որը փոխատվական կապիտալի շուկայում կուտակում է ազատ դրամական միջոցները և տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին²: Ինչպես և բոլոր հետխորհրդային հանրապետությունները, ՀՀ վարկային համակարգը պետք է ձևավորվեր այն իրողությունների հիման վրա, որոնք առկա էին ԽՍՀՄ վերջին տարիներին: Իսկ բանկային համակարգի տեսանկյունից դրանք մեղմ ասած նպաստավոր չէին: Ընդ որում՝ շուկայական բանկային համակարգին անցումը խոչընդոտվում էր ոչ միայն ինստիտուցիոնալ և աշխարհաքաղաքական գործոններով, այլև նոր ձևավորվող վարկային համակարգի ապագա հաճախորդների՝ նոր պայմաններում աշխատելու անպատրաստությամբ:

Վարկ տերմինն առաջացել է լատիներեն «credere» բառից, որը բառացի նշանակում է վստահել: Վարկային հարաբերությունները կարելի է ներկայացնել որպես տնտեսական սուբյեկտների միջև արժեքի տեղաշարժման հետ կապված հասարակական հարաբերությունների համակարգ, որը կարող է տեղի ունենալ վարկի տարբեր դրսևորումների տեսքով՝ առևտրային վարկ, բանկային վարկ, լիզինգ, ֆակտորինգ և այլն³: Վարկը ֆինանսական գործիք է, որը քաղաքացուն կամ ձեռնարկությանը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլ ունեցվածք գնելու կամ պարտավորություն կատարելու համար՝ վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածի ընթացքում: Սովորաբար վարկա-

¹ Беляков А.В., Банковские риски: проблемы учета, управления и регулирования. Москва, БДЦ-пресс, 2003.

² Николаев И.П., Теория переходной экономики. Москва, ЮНИТИ, 2001.

³ Деньги, кредит, банки: Учебник / Под ред. О. И. Лаврушина. — М.: Финансы и статистика, 2000.